ԿԻԼԻԿԻԱՅԻ 1909 Թ. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը չլուծեց երկրի համար առաջնակարգ նշանակություն ունեցող ո՛չ հողային և ո՛չ էլ ազգային հարցերը։ Ընդհակառակը, իթթիհատի կառավարությունն ավելի ուժեղացրեց Օսմանյան կայսրության կազմում եղած ժողովուրդների՝ արաբների, հույների, հայերի, քրդերի և ուրիշների սոցիալական կեղեքումը և ազգային հալածանքները, դատապարտելով նրանց ձուլման ու բնաջնջման։ Երիտթուրքերը սաստկացրին հատկապես հայերի ճնշումները, ծրագրեցին կազմակերպել հայկական նոր կոտորածներ[1]։

1908 թ. աշնանն ու 1909 թ. ձմռանը համարյա ամբողջ երկրում ծավալվում էր հակահայկական պրոպագանդա։ Մթնոլորտը շիկանում էր ոչ թե շաբաթ առ շաբաթ, այլ օր առ օր, ժամ առ ժամ։ 1909 թ. հունվարի 9-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ն. Սկրյաբինը հաղորդում էր Կ. Պոլսի իր դեսպանին, որ Էրզրումի մահմեդականների ատելությունը հայերի հանդեպ աճում է ոչ թե օրերով, այլ ժամերով։ Երիտթուրքերից նույնիսկ նրանք, ովքեր բացահայտորեն հայտարարում էին իրենց երախտապարտությունը հայերին՝ Թուրքիայի հակասուլթանական շարժման մեջ նրանց ցուցաբերած նախաձեռնության համար, այժմ գաղտնի հսկողություն են սահմանել հայերի վրա և իրենց գործակալներին առաջարկել են անհրաժեշտության դեպքում նրանց նկատմամբ եռանդուն միջոցներ կիրառել[2]։ Նույն թվականի մարտի 9-ին Ն. Սկրյաբինը հայտնում էր, որ մահմեդականների թշնամությունը հայերի դեմ աճում է նաև Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայեթներում։ «Դրությունն այնպիսին է,— եզրափակում էր նա,— որ կայծեր են հարկավոր հրդեհի համար»[3]։

Եվ այդ հրդեհը թուրքական գործակալներն առաջացրին Ադանայում, որտեղից այն արագորեն տարածվեց ամբողջ Կիլիկիայում և այրեց ու ավերեց բազմաթիվ հայկական շեներ, բնաջնջեց ու ոչնչացրեց նրանց անմեղ բնակիչներին։

Կիլիկիայի հայկական թագավորությունը գոյատևեց շուրջ 300 տարի և կործանվեց օտարերկրյա նվաճողների կողմից XIV դարում։ Այնուհետև շատ փորձանքներ եկան ու անցան, բայց Կիլիկիայի հայերը հավատարիմ մնացին իրենց հողին ու ջրին, մայրենի լեզվին ու քրիստոնեական հավատին։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Կիլիկիայում հաշվվում էր մոտ 205 հազար հայ[4], որոնք ապրում էին քաղաքներում ու գյուղերում և զբաղվում էին արդյունաբերությամբ ու գյուղատնտեսությամբ։ Քաղաքներից ամենանշանավորն Ադանան էր, որն ուներ 66 հազար բնակչություն։ Դրանցից 22 հազարը հայեր էին՝ 20 հազար լուսավորչականներ, 1500 բո-

---

1 Տե՛ս Ա. Ս. Համբարյան. Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914). Երևան, 1979, էջ 106—162։

2 Տե՛ս Архив внешней политики России, ф. «Посольство в Константинополе», 1909, д. 2677, л. 17—18։

3 Նույն տեղում, թ. 31։

4 Տե՛ս Թեոդիկ. Ամենուն տարեցույց. ԺԶ տարի, 1922, էջ 261։

ղոքականներ և 500 կաթոլիկներ[5]։ Հայերը Կիլիկիայում դերծ մնացին 1890—ական թթ. կոտորածներից և այդ պատճառով գտնվում էին ամենաբարեբախտ ավելի բարվոք վիճակում, քան Արևմտյան Հայաստանում։

Սուլթանական կառավարությունը չէր կարող հանդուրժել հայերի բարեկեցությունն ու բարգավաճումը, ուստի պատրաստվում էր նրանց կոտորել ու թալանել նաև կայսրության այդ մասում։ 1908 թ. հեղափոխությունը, ինչպես ասվեց, ոչ միայն չկանխեց, այլև նոր լիցք հաղորդեց այդ քաղաքականությանը։ Սակայն դեռ նոր անցնելով իշխանության գլուխ և կարիք ունենալով ամրապնդել իրենց դիրքերը երկրում, եռիտթուրքերը հարմար չգտան իրագործել հայության մասսայական ջարդեր ամբողջ կայսրությունում։ Նրանք սահմանափակվեցին միայն Կիլիկիայով, ուր այդ խնդիրն արդեն ընթացքի մեջ էր։ Իթթիհատի պրոպագանդիստները սկսեցին հայտարարել, թե իբր Կիլիկիայի հայերն ուզում են վերականգնել իրենց վաղեմի թագավորությունը, թե իբր նրանք ցանկանում են այդ նպատակին հասնել ապստամբության միջոցով, թե իբր նրանց շարժումը ղեկավարում է Աղանայի հայոց հոգևոր առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսը (Մուշեղ Սերոբյանը), կամենալով հռչակվել թագավոր, թե իբր հնչակյանները Կիլիկիայում ստեղծել են իրենց կազմակերպությունների խիտ ցանց և մարում են հեղափոխական ակտիվ գործունեություն, թե իբր հայդուկապետ Կչոյտերելյանը իր 300 զինվորներով պատրաստվում է մահմեդականների վրա արշավի և այլն։

Հայերը, անշուշտ, հերքեցին այդ սուտ ու պատիր լուրերը։ Նրանք հայտարարեցին, որ իրենք չունեն ապստամբելու և հայկական թագավորությունը վերականգնելու պլաններ, որ իրենք կամենում են քայլել Թուրքերի հետ միասին և նպաստել Թուրքիայի առաջընթացին։ Բայց Թուրքական կառավարությունը Կիլիկիայում շարունակեց իր հակահայկական վարքագիծը և ավելի խստացրեց այն։ Շուտով պաշտոնանկ արվեցին հայամետ մարդիկ և նրանց փոխարեն նշանակվեցին հայատյաց անձինք։ Կառավարության հայաջինջ քաղաքականության կենսագործումը հանձնարարվեց սուլթան Համիդի նախկին թիկնապահ և հենց նոր Ադանայի վիլայեթի կուսակալ նշանակված Ջևադ բեյին, զինվորական հրամանատար Մուսթաֆա Բեմդի փաշային, Ջեբել-Բերեքեթի մութասարիֆ Ասաֆ բեյին և ուրիշներին։ Մի առանձին եռանդով սկսեց հակահայկական պրոպագանդա ծավալել Ադանայի «Իթիդալ» («Զսփավորություն») թերթը։ Արշակունի Թեոդիկը նրա խմբագրի մասին գրում էր, որ հրազենն ու դաշույնը այնքան ավեր չկատարեցին քաղաքում ու նահանգում, «որչափ այդ մարդու գրիչը։ Ֆիքրիմ իմ աչքիս՝ տխրանուն հեղինակն էր կոտորածին»[6]։ Նա բորբոքում էր հակահայկական կրքեր, Թուրքերին կոչ էր անում կոտորել ապստամբության պատրաստվող և Թուրքիայի մասնատումը երազող գյավուրներին։

Ադանայի նոր կուսակալն ու զինվորական հրամանատարը սկսեցին գաղտնի խորհրդակցություններ գումարել. Կիլիկիա զորամասեր տեղափոխել, զինել խուժանին և մշակել հայկական ջարդերի պլաններ։ Նրանց թելադրանքով Ադանայի «Միություն և առաջադիմություն» ակումբը հեռագիր ուղարկեց Կիլիկիայի 18 վայրեր, մահմեդականներին կոչ անելով զինվել ու կոտորել հայերին։

Թուրքական իշխանությունները ըստ էության ամեն ինչ պատրաստել էին իրենց նպատակի իրագործման համար։ Առիթ էր պետք։ Եվ նրանք ձգտում էին ստեղծել այն (Բալանում ու կողոպտում էին առանձին հայերի, անպատվում ու սպանում էին նրանց)[7]։ Բայց ավելի հարմար առիթն առա-

---

5 Տե՛ս Համբարձում Հ. Աշչյան. Ադանայի եղեռնը և Գոնիայի հուշեր. Նյու Յորք, 1950, էջ 15։

6 Արշակունի Թեոդիկ. Ամիս մը ի Կիլիկիա, կցկտուր նոթեր. Կ. Պոլիս, 1910, էջ 108։

7 Այդ մասին հանգամանորեն տե՛ս Մուշեղ Եպիսկոպոս. Ադանայի ջարդը և պատասխանատուները. Գահիրե, 1909, էջ 34—47։

ջաղավ 1909 թ. մարտի 31-ին, երբ սուլթան Աբդուլ Համիդ II-ը, վռնդելով երիտթուրքերին, դարձավ իշխանության լիիրավ տեր։ Ադանայի պաշտոնյաներն այդ պահը հարմար համարեցին և սկսեցին կենսագործել հայկական կոտորածների իրենց պլանը։ Զինվորներն ու խուժանը գործի անցան։ Ապրիլի 1-ին նրանք հարձակվեցին Ադանայի հայկական թաղերի վրա և մի քանի ժամվա ընթացքում սրի քաշեցին Աճեմ, Տուզ, Հայդար օղլու, Գալե-գափու, Դելի Մեհմեդ և այլ վայրերի բոլոր հայերին։ Ամենուրեք մոլլաները կոչում էին. «Կոտորեցե՛ք, կոտորեցե՛ք գյավուրներին, թալանեցե՛ք, նրանց մալը հալալ է ձեզ»։

Հանկարծակիի եկած հայերը փախչում էին դես ու դեն, աղերսում օգնություն ու փրկություն, ահաբեկվածները գոռում էին՝ «փախեք, կուգան, մոտեցան...»[8]։ Ոմանք դիմում էին թուրքական պաշտոնյաների օգնությանը, բայց ապարդյուն։ Դահիճները սպանում էին հայերին հրացանների ու ատրճանակի կրակոցներով, կացիններով ու դանակներով, բրերով ու դաշույններով, մահակներով ու քարերով, սպանում էին ոչ միայն լուսավորչական, այլև կաթոլիկ ու բողոքական հայերին, սպանում էին ամեն տեղ, նաև պաշտոնյաների ու զինվորների աչքերի առջև, նրանց ներկայությամբ ու աջակցությամբ։ Նրանք հրկիզում էին հայոց տները, եկեղեցիները, դրպրոցները, հիվանդանոցները, ողջակիզում էին այնտեղ պատսպարված մարդկանց, թալանում նրանց ունեցվածքը։ Ջարդարարները կտրում էին հայերի ձեռքերը, ոտքերը, ականջները, քիթը, լեզուն, հանում էին աչքերը, սրատում էին ստամոքսը, կախում էին գոհերին ծառերից ու պատերից և զվարճանում իրենց վայրագություններով[9]։

Անգլիացի ականատես Հերբերտ Էդեմզ Կիբանչը գրում էր. «Տեսարանները որոնք պարզվեցան այդ օրը, չեմ կրնար նկարագրել իրենց ահավորության պատճառով։ Անկարելի էր փողոցներու մեջեն քալել՝ առանց դիակի մը վրա կոխելու։ Շունները խրախճանք կկատարեին դիակներու վրա։ Հոշոտումները սարսափելիորեն աննկարագրելի էին, մասնավորապես աղջիկներու և մանուկներու վրա կատարածները։ Տեղ մը հինգ վեց հոգի միասին ցցամահ եղած էին։ Մանկիկ մը տեսա... երկու տասնյակ մը գնդակի ծակեր՝ պզտիկ մարմնու վրա։ Հայոց վարժարանին մեջ երկու հազար հոգիներ սպանվեցան։ Ջարդը ընդհանուր է։ Ադանան ավերակույտի վերածված է»[10]։ Դահիճներից յուրաքանչյուրն աշխատում էր որքան հնարավոր է շատ հայ սպանել, որ տիրեր նրա ունեցվածքին։ Պատահում էր, որ նրանք հայերի ունեցվածքի համար նույնիսկ իրար էին սպանում, իսկ հետո հայտարարում, թե հայերն են արել։

Այնուամենայնիվ, հայերը սթափվեցին և դիմեցին ինքնապաշտպանության (նրանցից շատերը 1908 թ. հեղաշրջումից հետո զենք էին ձեռք բերել)։ 1909 թ. ապրիլի 1-ին Ադանայի կենտրոնում Կարապետ Լաչինյանի, Տիգրան Պզտիկյանի և Միսաք Թուրսարգսյանի գլխավորությամբ 173 կտրիճներ դիրքեր գրավեցին և շեշտակի կրակոցներով սկսեցին գետին փռել ու փախուստի մատնել խուժանին, պաշարումից ազատելով բազմաթիվ համաքաղաքացիներ։ Նույն օրը երեկոյան մահմեդական խաժամուժը, համալրվելով նոր ուժերով, անցավ վերահարձակման։ Բայց հայերը արիաբար դիմադրեցին, որի հետևանքով կռիվները շարունակվեցին մինչև ուշ գիշեր։ Ապրիլի 2—3-ին թշնամին դիմեց նոր հարձակման։ Հայերը թեև արիաբար հետ մղեցին նրան, բայց արդեն այնքան էին թուլացել, որ այլևս չէին կարող շարունակել մարտերը։ Ուստի դիմեցին կուսակալին, խնդրելով վերջ դնել արյունահեղությանը։ Կուսակալ Ջևադ բեյը խոստացավ կատարել նրանց ցանկությու-

---

8 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. Կիլիկիո աղետը Ականատեսի նկարագրությունները, վավերագրեր, պաշտոնական տեղեկագրեր, թղթակցություններ, վիճակագրություններ, ամենեն կարևոր պատկերներ. Կ. Պոլիս, 1912, էջ 34։

9 Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. под ред. проф. М. Г. Нерсисяна. Ереван, 1966. с. 186.

10 Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 138—139։

նը, պայմանով, որ հայերը հանձնեն իրենց զենքերը։ Հայերը ստիպված համաձայնվեցին։ Ապրիլի 4-ին կոտորածները դադարեցին։ Իշխանությունների կարգադրությամբ քաղաքի փողոցներում ընկած դիակները հավաքվեցին, բարձվեցին սայլերին և թափվեցին դետը, որը տարավ դրանք դեպի Միջերկրական ծով, բաժին դարձրեց շնաձկներին։ Ականատեսներից մեկը՝ ֆրանսիական ժուռնալիստ. ազգությամբ հույն Ա. Ադոսիդեսը գրում էր. «Ալեքսանդրետի ծովածոցը երբեք չէր տեսել շնաձկների այդպիսի ներխուժում։ Սպանները օրեր շարունակ դիտելով այդ տեսարանը, կատարեցին բազմաթիվ նկարահանումներ»[11]։ Ապրիլի 7-ին Ադանայի վերոհիշյալ «Իթիդալ» թերթը հրապարակեց Իսմայիլ Սաֆայի «Մի ահավոր ապստամբություն» վերնագրով հոդվածը, որի մեջ նա հայերի ջարդերը ներկայացնում էր իբրև ապստամբություն, հայտարարում էր, թե իբր նրանք կոտորել են թուրքերին և կոչ էր անում աչալուրջ լինել, քանզի հայերը պատրաստվում են նորից ապստամբել։ Անհրաժեշտ է այնպես զսպել նրանց, որ այլևս չըդիմեն այդ քայլին[12]։ Հայերը, իհարկե, բողոքեցին թերթի դեմ, բայց հասան սոսկ նրան, որ այն մի քանի օրով փակվեց։ Սակայն շուտով «Իթիդալը» կրկին հրատարակվեց, ավելի թունդ բորբոքելով թուրքերի հակահայկական կրքերը[13]։

Ապրիլի 13-ին (26-ին) երիտթուրքերը տապալեցին սուլթան Համիդին և արտաքսեցին Կ. Պոլսից։ Նրա փոխարեն սուլթան հռչակեցին եղբորը՝ թուլամիտ ու կամազուրկ Մեհմեդ V Ռեշադին։ Թվում էր, թե ջարդերն անցնելու էին պատմության գիրկը, բայց դա պատրանք էր։ Հենց ապրիլի 14-ին Ադանայում հայկական կոտորածները վերսկսվեցին, ընդունելով ավելի ահեղ բնույթ։ Երիտթուրքական «ազատության» զինվորները միանալով խուժանին, նետվեցին հայկական թաղերի վրա և շարունակեցին հրկիզել եկեղեցիները, գեռ ողջ մնացած դպրոցները, Արգարյան կոլեջն ու պանսիոնատը, Մուշեղյան վարժարանը և այլ հիմնարկներ, ողջակիզելով այնտեղ պատսպարված հազարավոր հայերի։ Ովքեր փորձում էին փախչել բոցերից, ընկնում էին թշնամու գնդակներից։ Ականատեսը հուշագրում էր, որ իթթիհատի զինվորները «առաջին աղետեն հազարապատիկ ավելի աստիճան սոսկալի ահի ու դողի մատնեցին զմեզ»[14]։ Եվ դա հասկանալի է. առաջին ջարդի ժամանակ հայերը գոնե զենք ունեին, իսկ այժմ այդ էլ չունեին, քանի որ թուրքական իշխանությունները զինաթափել էին նրանց։ Ցերեկ ու գիշեր Ադանայի հայկական թաղամասերում թևածում էր կրակե փոթորիկը։ Ամենուրեք լսվում էին հայերի օգնության կանչերը, լացն ու կոծը, աղերսանքներն ու հառաչանքները։ Իսկ պաշտոնյաներն ու զինվորները զվարճանում էին իրենց ստեղծած տեսարաններով, թալանում նրանց ունեցվածքը, տանում շալակով ու սայլերով։ Ադանայի երկրորդ ջարդերն ավարտվեցին ապրիլի 17-ին, բայց առանձին տեղերում դրանք շարունակվեցին նաև ապրիլի վերջերին ու մայիսի սկզբներին[15]։

Թուրքական իշխանությունները Ադանայի հետ միաժամանակ կոտորածներ իրագործեցին Կիլիկիայի նաև այլ հայաբնակ վայրերում։ Տարսոնում՝ ապրիլի 1-ին նրանք հավաքեցին խուժանին զորանոցում և զինեցին։ Անհանգստացած հայերը դիմեցին պաշտոնյաներին։ Բայց նրանք, ինչպես Ադանայում, այնպես էլ այստեղ հանգստացրին նրանց, ասելով, թե ոչ մի վատ բան չի սպասվում, մինչև իսկ հայտարարեցին, թե իրենք պատասխանատու են իրավիճակի համար։ Սակայն հաջորդ օրը Ադանան ավերող ու թալանող խուժանի մի մասը շոգեկառքով մեկնեց Տարսոն և միանալով տեղի ոճրագործներին, սկսեց կոտորել հայերին, հրկիզելով նրանց տներն ու հիմնարկ-

11 Геноцид армян..., с. 188—189.

12 Տե՛ս Հ. Հ. Ա ղ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 23։

13 Տե՛ս Հ ա կ ո բ Հ. Թ ե ր զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 62—63, 76, 97։

14 Նույն տեղում, էջ 101։

15 Տե՛ս Геноцид армян..., с. 189.

ները։ «Կրակը պատեց ամեն կողմ,— նշում է ականատեսը,— շատերը չի կրնալով փախչիլ՝ իրենց տուներուն մեջ այրեցան»[16]։

Տարսոնից հետո խուժանը հարձակվեց նրանից 8 ժամ հեռավորության վրա գտնվող Գոզ-Օլուգի վրա։ Բնակիչները փորձեցին դիմադրել։ Դահիճները պահանջեցին հանձնել զենքերը, հավատացնելով, որ չեն կոտորի։ Բայց հենց որ դյուրահավատ հայերը կատարեցին նրանց պահանջը, թուրքերը լցվեցին գյուղ և սկսեցին սպանել ու թալանել։ Ովքեր փախչում էին հարևան թուրքերի գյուղերը, որ փրկվեն, ընկնում էին նրանց դանակներից ու բրերից։ Ջարդարարները հավաքում էին սպանվածների դիակներն ու վիրավորներին, դարսում իրար վրա և այրում։ «Բոցը կբարձրանար կատաղի սաստկությամբ.— գրում էր պատահմամբ փրկվածներից մեկը,— և կերկարեր դեպի երկինք, անոր մեջեն կլսվեին մանկան սուր ճիչեր, մայրական աղեխարշ գոչեր և օրհասականի սրտաճմլիկ հառաչներ. մեկը կիսայրած հագուստով կփորձեր փախչիլ հնոցի սաստկութենեն, մյուսը կիսախանձ իրանով վերըստին ճիգ մը կրներ վտանգեն ազատվելու... յուրաքանչյուր զոհի ճիչերուն թուրք խուժանը կպատասխաներ ծիծաղներով և վրեժի լուտանքներով»[17]։

Ապտոդլու գյուղում, որն ուներ 66 տուն կամ 265 բնակիչ և ընդունել էր 242 փախստականների, ինչպես պատմում էր տեղի քահանան, երիտասարդները որոշեցին դիմադրավել թշնամուն։ Նրանք ունեին 5 մաուզեր, 60 ատրճանակ ու հրացան։ Բայց գյուղապետ Բաղդադ օղլու Կարապետը կանխեց, հեգնելով, թե «մեզի է մնացել իսլամին դեմ դնել... չիֆթեներով (որսորդական հրացաններով—Ա. Հ.) խուշ կգարնվի, մարդ չի զարնվիր...», պետք է ճիտերնիս ծռենք, զենքերնիս հանձնենք ու իրենց ողորմածության վրա հուսանք»[18]։ Երիտասարդները թեև առարկեցին նրան, ասելով, թե ո՞ր օրվա համար ենք գնել հրացանները, ի՞նչ կտրիճներ ենք մենք, մեր կանայք ու երեխաները մեզ վրա են հույս դրել, ի՞նչ երեսով պետք է նայենք նրանց, բայց գյուղապետը մնաց անդրդվելի։ Նա պարզեց ճերմակ դրոշակը և գյուղը հանձնեց խուժանին։ Քահանան ապա շարունակում էր. «Տյուշմանը եկավ, մեր զենքերը հավաքեց ու անմիջապես մեզ ջարդեց»։ Միայն մի երիտասարդ, որ թաքցրել էր իր հրացանը, հակառակորդից 7 մարդ սպանեց ու փախավ։ Թշնամին գյուղը հրդեհեց, բնակիչներին կոտորեց, 265 մարդուց կենդանի թողեց միայն մի քանի հոգի, «ան ալ մեծ մասով կին»[19]։ Իսկ Բաղդադ օղլու Կարապետին տանջամահ արին, սպանելով նրա աչքերի առաջ նախ կնոջը, ապա տղաներին, այնուհետև հարսներին ու թոռներին[20]։

Միսիսում հազարապետը կանխեց կոտորածը։ Սակայն նրա հեռանալուց հետո խուժանը անցավ հարձակման։ Շուրջ 200 հայեր դիրքեր գրավեցին և արիաբար կռվեցին։ Բայց ուժերն անհավասար էին, թշնամին կոտրեց նրանց դիմադրությունը և համարյա բոլորին սրի քաշեց[21]։

Օսմանիեում հայերը, երբ իմացան, որ թուրքերը հարձակվելու են իրենց վրա, պատգամավորներ ուղարկեցին կայմակամի մոտ, որ կանխի արհավիրքը։ Սա պատասխանեց. «Հոգ մի ընեք, ձեզի համար բան չկա»[22]։ Բայց պատգամավորները դեռ չէին վերադարձել, երբ խուժանը լցվեց նրանց գյուղաքաղաքը։ Չորս ժամվա ընթացքում ամբողջ Օսմանիեն ավերվեց, 600 հոգի սրի քաշվեց, 250 ողբակիրներ եկեղեցում, թաքնված 22 կանայք դանակահարվեցին[23]։ Հայերից շատերը իրենք էին նետվում հրդեհի մեջ, որ տանջամահ չլինեին։ Թուրքական դահիճներից մեկը (փալթանը էոքքեշ) հայ-

16 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 165—166։

17 Նույն տեղում, էջ 176։

18 Զաքել Եսայան. Ավերակներուն մեջ. Կ. Պոլիս, 1911, էջ 98։

19 Նույն տեղում, էջ 98—99։

20 Նույն տեղում։

21 Նույն տեղում, էջ 169։ Արշակունի Թեոդիկ. նշվ. աշխ., էջ 137։

22 Զաքել Եսայան. նշվ. աշխ., էջ 224։

23 Նույն տեղում, էջ 225։

ին կացնահարում ու անդամահատում էր։ Ականատեսը պատմում էր. «Երեսունե ավելի հայ վիրավոր, երիտասարդներու գլուխն ու մարմինը ջարդ ու փշուր ըրավ այդ բորենին»[24]։

Օսմանիեից հետո խուժանը հարձակվեց Պախչեի վրա։ Բնակիչները սակավաթիվ զենքերով դիմադրեցին։ Նրանք արիաբար կռվեցին մինչև երեկո և տեսնելով, որ պարտվելու են, փորձեցին ճեղքել Թշնամու պաշարումը ու հեռանալ։ Սակայն 20 հոգուց միայն չորսին հաջողվեց ազատվել, մյուսները զոհվեցին։

Հասան-բեյլի գյուղի վրա ջարդարարները հարձակման անցան ապրիլի 2-ին։ Նրա բնակիչները, ըստ որոշ հեղինակների, գյուղապետի որդի Պետրոս Քեշիշյանի[25], իսկ ըստ այլոց՝ բնիկ ադանացի Սահակ էֆենդի Տեր-Սահակյանի[26] գլխավորությամբ իրենց որսորդական հրացաններով երկու օր դիմադրեցին։ Բայց Թշնամին գրավեց հայերի դիրքերը և «400 տուներե բաղկացած հայաբնակ գյուղը սուրի, հուրի և թալանի մատնեց»[27]։ Կենդանի մնացած հասան-բեյլիցիները փախան Ֆընտրճագ։ Թշնամին հետապնդեց նրանց, ուզեցավ սրանց հետ միասին բնաջնջել նաև Ֆընտրճագցիներին։ Բայց վերջիններս ոտքի կանգնեցին և վռնդեցին խուժանին։ Գրիգոր Գ. Գուտուլյանը գրում էր. «Ֆընտրճագացին ժայռի զավակ, քաջորդի, գիտցավ ինք-զինք պաշտպանել արի դիմադրությամբ մը և պահպանել իր գոյությունը, Թշնամի վայրագ խուժանը Ֆընտրճագի շրջակա լեռներեն 10—12 օր շարունակ ոռնաց, սակայն չկրցավ մոտենալ և ակռա անցնել»[28]։

Շեյխ-Մուրադում կամ Շարդերում Տեր-Գևորգը ոտքի հանեց համագյուղացիներին և երեք որսորդական հրացաններով այնպիսի վարպետությամբ ինքնապաշտպանություն կազմակերպեց, որ հակառակորդին թվաց, թե գործ ունեն մեծ ուժի հետ[29]։ 20 հազարի հասնող խուժանը չէր համարձակվում գրոհել և զարմացած ու զայրացած գոռում էր. «Կյավուրներ, անձնատուր եղեք»[30]։ Կռիվը տևեց հինգ օր։ Երբ սպառվեց շարդերցիների զինամթերքը, նրանք ճեղքեցին Թշնամու օղակումը և շարժվելով Ադանա, փրկվեցին։ Ողջ մնացած գյուղացիներից մեկը նշում էր, որ իրենք չէին լքի իրենց դիրքերը, եթե զենք ունենային, մահը նրանց համար սարսափելի չէր, «մանավանդ չգիտցող մարդը, ապրելու արժանի չէ»[31]։

Ավելի նշանավոր է Տյորթյոլի կամ Ջոք Մարզվանի ինքնապաշտպանությունը։ Այս գյուղը գտնվում էր Ադանայից հարավ, Միջերկրականի ափին, ուներ 4850 հայ բնակիչ։ Բայց այդ թիվը արագորեն մեծացավ, երբ շատերը այլևայլ տեղերից կոտորածներից փախչելով հանգրվանեցին այստեղ։ Ապրիլի 2-ին չոքմարզվանցիները, լուր ստանալով, որ խուժանը գալիս է իրենց վրա, որոշեցին դիմադրել և մեռնել «զենքը ձեռներնիս»[32]։ Ամբողջ ժողովուրդը,—հիշատակում է Արշակունի Թեոդիկը,—մեկ սիրտ, մեկ հոգի դարձավ»[33]։ Ինքնապաշտպանության գլուխ կանգնեց Միհրան Մելքոնյանը, որը հմտորեն տանելով գործը, ահեղ կռիվներ վարեց 20 000 թուրքական կանոնավոր զինվորների ու խուժանի դեմ։ Տեսնելով, որ կրակներով ու գրոհներով անկարող է կոտրել հայերի դիմադրությունը, Թշնամին կտրեց

24 Գրիգոր Գ. Գուտուլյան. Հայ լեռը, կարմիր դրվագներ Կիլիկիոյ առնեն. Կ. Պոլիս, 1912, էջ 43։

25 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. Նշվ. աշխ., էջ 204։

26 Տե՛ս Գրիգոր Գ. Գուտուլյան. Նշվ. աշխ., էջ 51։

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում, էջ 60։

29 Տե՛ս С. З. Аданские черные дни. Баку, 1909, с. 21; Հակոբ Հ. Թերզյան. Նշվ. աշխ., էջ 220—226։

30 Զապել Եսայան. Նշվ. աշխ., էջ 103։

31 Նույն տեղում, էջ 100։

32 Նույն տեղում, էջ 254։

33 Արշակունի Թեոդիկ. Նշվ. աշխ., էջ 176։

ջուրը։ Ինքնապաշտպանները ծարավից ուժասպառ էին լինում, երեխաներից շատերը մահանում էին։ Զ. Եսայանը այդ առթիվ գրում էր. «Այո, ծարավը Տյորթյոլի պատմության ամենացայտուն դրվագն էր. ինն օր ջուրը կտրած էին. բայց վերջին երեք օրերը միմիայն կատարելապես առանց ջուրի մնացել էին. փոքրիկ տղաքը մեռեր էին ահռելի տանջանքներով...»[34]։ Սակայն տյորթյոլցիները ոչ միայն դիմացան, այլև անցան հակահարձակման և, փախուստի մատնելով խուժանին, վերանվաճեցին ջրի ակունքները։ Հակառակորդը, չկարողանալով հասնել հաջողության, հեռագրեց իշխանություններին, թե Զոք Մարզվանի հայերն ապստամբվել են, դորք ուղարկեցեք՝ ղանոնք նվաճելու համար»[35]։

Ինքնապաշտպանության 13-րդ օրը հայերի խնդրանքով հայտնվեցին տարերկրյա հյուպատոսները և առաջարկեցին, թե կփրկեն նրանց, եթե հանձնեն իրենց ղեկավար Միհրան Մելքոնյանին։ Սակայն հայերը կտրականապես մերժեցին[36]։ Դեպքերից համարյա անմիջապես հետո Տյորթյոլ ժամանած Զապել Եսայանը, հանգամանորեն լսելով կռիվների մասնակիցների պատմածները, գրում էր. «Պառավները սքանչելի եղած էին նաև կռվի օրերին. անոնք էին, որ կխրախուսեին քաջերը, կհեգնեին թույլերը ու հոգնութենեն և քնատութենեն ջլատվածները հանելով իրենց անկողիններեն՝ կըղրկեին պատնեշներու վրա։ Պառավները օգնած էին նաև կռվողներուն՝ անոնց ուտեստ և պաշար հասցնելով, և ծարավի ահռելի օրերուն մեջ պատրանքներով օրորած էին հուսահատողներն ու տառապողները»[37]։ Իրենց հերոսական պայքարի շնորհիվ չոքմարզվանցիները կարողացան փրկվել կոտորածներից։

Ժամանակակիցները բարձր են գնահատել Զոք Մարզվանի ինքնապաշտպանությունը։ 1910 թ. Հ. Շահպազյանը գրում է. «Զոք Մարզվանը կատարեց ամենեն հոյակապ ինքնապաշտպանությունը. տասնհինգ օրվա դիմադրությամբ փրկեց ոչ միայն ինքզինքը, այլև շրջակա գյուղերեն իր մոտ ապաստանողներու և իրեն միացողներու կյանքը»[38]։

1912 թ. Հակոբ Թերզյանը նշում է. «Տյորթ-յոլ՝ իր քաջ և անձնվեր ժողովրդին շնորհիվ միշտ այս տեսակ անակնկալ հարձակումներու դեմ հաղթող հանդիսացած է և սարսափ կազդե շրջակա գյուղերուն»[39]։

Սիամանթոն Կիլիկիայի դեպքերի առթիվ գրեց մի շարք բանաստեղծություններ, որոնք հայտնի են «Կարմիր լուրեր բարեկամես» վերնագրով։ Նա գովերգում էր հատկապես Զոք Մարզվանի հերոսներին, որոնք արիաբար պայքարելով թշնամու դեմ, շատերին փրկեցին անվերապահ կործանումից[40]։

Խառնիում հայերը հաջողությամբ հետ շպրտեցին ջարդարարներին։ Համոզվելով, որ գրոհով չեն կարողանում նվաճել հայոց դիրքերը, նրանք դիմեցին նենգության, առաջարկելով հաշտություն։ Խառնեցիները հավատացին և դուրս գալով իրենց ամրություններից, շարժվեցին դեպի հակառակորդը։ Դահիճները անմիջապես շրջապատեցին նրանց, ոչնչացրեցին և մինչև վերջինը սվինահարեցին[41]։

Սիսը գտնվում էր Ադանայի հյուսիս-արևելյան [illegible]ում և ուներ 2000 տուն բնակիչ, որից 1500-ը՝ հայ։ Ապրիլի 1-ին հայերը սսեցին կոտորածների լուրը, իսկ ապրիլի 2-ին կանգնեցին փաստի առաջ։ Ոճրագործները «հաշարներով եկեր էին պաշարելու զիրենք, այնքերնին վառած թալանի ու կողոպուտի հրայրքեն և բերաններնին լեցուն հայհոյություններով և սպառնա-

34 Զապել Եսայան. նշվ. աշխ., էջ 261։
35 Արշակունի Թեոդիկ. նշվ. աշխ., էջ 126։
36 Նույն տեղում, էջ 187։
37 Զապել Եսայան. նշվ. աշխ., էջ 252—253։
38 «Ազատամարտ», 1910, № 249։
39 Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 220։
40 Տե՛ս Սիամանթո. Ընտիր երկեր. Երևան, 1957, էջ 185։
41 Տե՛ս Геноцид армян..., с. 191.

լիքներով»[42]։ Սսի հայերը Կիլիկիայի աթոռի միաբան Ղևոնդ ծայրագույն վարդապետ Թուրսարգսյանի և Սսի Շնորհ կաթողիկոսի գլխավորությամբ դիմեցին ինքնապաշտպանության[43]։ Արհեստավորները թողեցին իրենց ամենօրյա զբաղմունքը, իսկ գյուղացիները մի կողմ դրեցին գործիքները և զենք վերցրեցին։ «Ու ամենքը,— պատմում է մասնակիցներից մեկը,— նույնիսկ պատանիներ ու ծերունիներ... հայրենի քաղաքի պաշտպանության հոգով, ջերմեռանդ ուրախությունով կդիմենք որոշված դիրքերը...»[44]։ Շնորհիվ անձնազոհ պայքարի, Սիսը փրկվեց կոտորածներից։ Թշնամին, չկարողանալով ներխուժել քաղաք, թողեց նրա պաշարումը և հեռացավ։

Փոքր-ինչ այլ կերպ դասավորվեց Հաճընի ճակատագիրը։ Այդ քաղաքը գտնվում էր Ադանայից հյուսիս և ուներ 5000 տուն հայ բնակիչ։ Նրանցից շատերը վաստակ որոնելու նպատակով ցրված էին «Կիլիկիո բոլոր կողմերը» և թեև արիաբար մասնակցեցին տվյալ վայրերի դիմադրական կռիվներին, բայց և այնպես զոհվեցին։ Իրազեկները նշում են, որ ամենաշատ մարդկային կորուստները Հաճընը տվեց[45]։ Ջարդերից փրկված հայոց առանձին զանգվածներ տարբեր տեղերից եկել պատսպարվել էին Հաճընում և անցել իրենց եղբայրների ու քույրերի պաշտպանության տակ։ «Տուն չկար, որ այրի մը ու քանի մը որբ չունենար իր երդիքին ներքև»[46]։ Այդուհանդերձ հաճընցիները, երբ իմացան, որ թուրքական զորքն ու խուժանը հարձակվելու են իրենց վրա, ներսես ծայրագույն վարդապետի գլխավորությամբ դիմեցին ինքնապաշտպանության։ Շուտով թշնամին պաշարեց քաղաքը, բայց հանդիպելով ահեղ դիմադրության, չկարողացավ այն վերցնել։ Խուժանը փորձեց թալանել հաճընցիների հոտերը, սակայն վերջիններս հետապնդելով հետ խլեցին իրենց ունեցվածքը։ Ավելին՝ հաճընցիները տեսնելով, որ իրենց զինամթերքը սպառվում է, հարձակվեցին կառավարության զինանոցների վրա, բայց հաջողության չհասան։ Այն ժամանակ նրանք սկսեցին վերանորոգել և օգտագործել իրենց հին զենքերը։ Թշնամին, համալրելով իր շարքերը, նորանոր հարձակումների էր անցնում, բայց ամեն անգամ ջարդվում ու հետ էր շպրտվում։ Հայերը որոշել էին «մեռնիլ ու չհանձնվիլ» և այդ նշանաբանով վարում էին կռիվը։ Սակայն տեսնելով, որ իրենց ուժերը գնալով նվազում են, սկսեցին միջամտության և օգնության հեռագրեր ուղարկել Ադանայի կուսակալին։ Վերջինս պատասխանեց, թե հազարապետին կուղարկի օգնության։ Սակայն սա ժամանելով Հաճընը, օգնեց ոչ թե պաշարվածներին, այլ նրանց հակառակորդներին։ Չնայած դրան հաճընցիները համառորեն շարունակեցին գոյամարտը։ Եվ երբ սուլթան Համիդ II-ը վերջնականապես տապալվեց ու իշխանությունն անցավ երիտթուրքերի ձեռքը, զինվորներն ու խուժանը քաշվեցին, Հաճընի հայերը փրկվեցին։ Ինքնապաշտպանական «կռիվների մասնակիցներից մեկն ասում էր. «Տասներկու օր տասնյակ հազարներե բաղկացած խուժանի դեմ քաջաբար դիմադրելե ետքը աղատվեցանք»[47]։ Մի այլ հեղինակ գրում է, որ Հաճընը «իր անհավատալի պաշտպանությունով, իր վեհանձն ու մարտնչող ոգիով ընդհանուր դժբախտության մեջ այն բացառիկ անկյուններեն մեկն է, որուն մեր ազգային հպարտությունը պետք ուներ կառչելու»[48]։

Ահեղ կռիվներ տեղի ունեցան նաև Ղարսբաղարում, որն ընկած էր Սսից արևելք, և ուներ 1000 հայ բնակիչ։ Հայազգի թուրքական ոստիկան Ջին Թորոսը, իմանալով, որ զինվորներն ու խուժանը հարձակվելու են այդ գյուղի վրա, կազմակերպում է նրա բնակիչների ինքնապաշտպանությունը, մաս-

42 Ջ ա պ ե լ Ե ս ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 177—178։
43 Տե՛ս Հ ա կ ո ր Հ. Թ ե ր զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 229—232։
44 Ջ ա պ ե լ Ե ս ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 178։
45 Նույն տեղում, էջ 181։
46 Նույն տեղում, էջ 182։
47 Հ ա կ ո ր Հ. Թ ե ր զ յ ա ն. նշվ. աշխ., էջ 243։
48 Ջ ա պ ե լ Ե ս ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 181։

նակից դարձնելով դրան հարևան թուրք գյուղացիներին։ Նա այնպես է տեղաբաշխում իր մարտիկներին դիրքերում, որ նրանք հեշտությամբ հետ են շպրտում թշնամու գրոհները։ Թուրքերը մի քանի անգամ կրկնում են իրենց հարձակումները, նույնիսկ կարողանում են հրդեհել 60 տուն ու 100 խրճիթ, սակայն հայերը համառորեն դիմադրում են և փրկվում կոտորածներից[49]։ Զապել Եսայանը նշում է. «Դարս-բազարի ինքնապաշտպանությունը, իր թվին անհամեմատ պզտիկությունով, իր ունեցած զենքերուն տեսակի ու քանակի անբավականությունով այն հրաշքներեն մեկն է, որ պարծանքով էրնանք արձանագրել մեր ազգային պատառոտուն և ցավագին պատմության մեջ»[50]։

Համիդիեում, որը գտնվում էր Ադանայի հարավ-արևելյան կողմում և ուներ 1000 տուն բնակիչ, որից 100-ը հայ, դինվորներն ու խուժանը հարձակման անցան ապրիլի 1-ին։ Բայց թուրքական մի քանի պաշտոնյաներ թույլ չտվեցին նրանց հոշոտելու հայերին։ Այնժամ թշնամին նրանց համարեց քրիստոնյաներ և պատրաստվեց դրանց ևս բնաջնջել։ Պաշտոնյաները ստիպված տեղի տվին։ Զինվորներն ու խուժանը նետվեցին հայերի վրա։ Այդ ծանր պահին մարաշցի Հովհաննեսն ու Սարդիս Աղազարյանը կարողացան կազմակերպել իրենց համագյուղացիներին և դիմագրավել թշնամուն։ Տեղ-տեղ նրանք նույնիսկ փախուստի մատնեցին հակառակորդին։ Բայց պարտվեցին։ Թշնամին դաժան հաշվեհարդար տեսավ հայերի հետ, չխնայելով ոչ ոքի։

Դահիճները Համիդիեի 1300 հայերից կենդանի թողեցին միայն 90 կին, որոնց մի մասին էլ մահմեդականացրին[51]։

Կյավուրքյոյ գյուղն ընկած էր Ադանայի արևմտյան կողմում և կոչվում էր նաև Խրիստիանքյոյ կամ ուղղակի Հայգյուղ։ Նրա բնակիչները հենց որ իմացան թշնամու հարձակման մասին, կազմակերպվեցին և քաջաբար դիմագրավեցին։ Արշակունի Թեոդիկը գրում է. «Դյուցազնական եղած էր այն դիմադրությունը, զոր ըրած էին Կյավուր-Քյոյի բնակիչները»[52]։ Երեք օր, երեք գիշեր նրանք համառորեն պայքարեցին, իսկ երբ զինամթերքը սպառվեց, գիշերով լքեցին իրենց դիրքերը և, ճեղքելով հակառակորդի օղակը, ազատվեցին[53]։

Ողբերգական եղավ Սիսի մոտերքում գտնվող Զոխախ գյուղի հայերի ճակատագիրը։ Երբ լսեցին կոտորածների մասին, նրանք իրենց կանանց ու երեխաներին ուղարկեցին Սիս և անցան ինքնապաշտպանության։ Նրանց հարևան մահմեդականները հայտարարեցին, թե գալիս են իրենց պաշտպանելու։ Բայց մտնելով Զոխախ, բոլորին սրի քաշեցին[54]։

Կարելի է բերել հայկական կոտորածների ու ինքնապաշտպանական կռիվների մասին նաև այլ փաստեր։ Բայց սահմանափակվենք այդքանով։ Նշենք, որ 1909 թ. ապրիլի առաջին կեսին համարյա ամբողջ Ադանայի վիլայեթն այրվում էր բոցերի մեջ։ Բացառություն կազմեց միայն Սելևկյան սանջակը։

Դահիճները չսահմանափակվեցին միայն Ադանայի կուսակալությամբ։ Նրանք հրի ու սրի ենթարկեցին նաև Հալեպի նահանգի բազմաթիվ հայաբնակ գյուղեր։ Ապրիլի սկզբին թուրքական զինվորներն ու խուժանը կոտորեցին Անթաքիայի, Քեսապի, Գրբրգ խանի, Աթզ, Դանլը-Տերե, Սարը-Զինար, Սողանճ, Մեզկիթեռ, Հաճի-Մուսալը և այլ հայ գյուղերի բնակիչներին։ Ջարդերից զերծ մնացին միայն Մարաշն ու Զեյթունը՝ շնորհիվ նրանց հայ

49 Տե՛ս Հակոր Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 249—250։ Զապել Եսայան. նշվ. աշխ.. էջ 191—195։

50 Զապել Եսայան. նշվ. աշխ., էջ 191։

51 Տե՛ս Հակոր Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 194։

52 Արշակունի Թեոդիկ. նշվ. աշխ., էջ 114։

53 Նույն տեղում։

54 Տե՛ս С. З. Указ. соч., с. 14—15.

ու թուրք ղեկավարների համերաշխության[55]։ Անշուշտ, Հալեպի նահանգում ևս հայերը որոշ տեղերում դիմագրավեցին թշնամուն, բայց նրա գերազանց ուժերի առաջ տեղի տվեցին։ Ամենուրեք, ուր հայերը դիմադրում էին, ավելի քիչ էին զոհեր տալիս, քան այն ժամանակ, երբ հանձնվում էին թշնամու ողորմածությանը։

Հարկ է նշել, որ տղամարդկանց հետ միասին ինքնապաշտպանական մարտերին մասնակցում էին նաև կանայք։ Թուրքական դարավոր արյունոտ լուծը չէր կարողացել սպանել ինչպես հայի, այնպես էլ հայուհու ազատասեր ոգին։ Կանայք օգնում էին իրենց ամուսիններին, եղբայրներին ու որդիներին, ոմանք նույնիսկ զենք էին վերցնում ու նետվում ռազմադաշտ։ Իսկ երբ դրությունը դառնում էր անհուսալի, շատերն ինքնասպան էին լինում, որ չընկնեն թշնամու ձեռքը։ Այսպես. Գող-Օլուդում նորապսակ գեղանի Պերճուհին չուզենալով արատավորվել, հրամայաբար պահանջեց ամուսնուց սպանել իրեն։ Որքան էլ դա դաժան էր, ամուսինը կատարեց նրա պահանջը[56]։ Միսիսում մի հայուհի, երբ տեսավ, որ թշնամին հաղթում է, իր 8 աղջիկների մազերն իրար հյուսեց, «որպեսզի իրենց տունը հրդեհված պահուն՝ չկարենային անոնք դուրս փախչիլ և իյնալ կատաղած խուժանին պիղծ ձեռքերուն մեջ»[57]։ Եվ այդպես նաև ուրիշները, որոնք իրենց պատիվը փրկելու համար «նախամեծար համարեցին ողջ-ողջ իրենց կյանքի բույնը լափլիզող բոցերու մեջ նետվիլ, այրիլ ու ճենճերվիլ, Սիհանի ու Ճիհանի ալիքներուն ծոցը ապաստանիլ, խեղդամահ ըլլալ...»[58]։

Անշուշտ, բոլոր մահմեդականները չէին, որ կոտորում էին հայերին։ Ընդհակառակը՝ մի մասը օգնում էր նրանց և փրկում կործանումից։ Սիսում, օրինակ, թուրք բնակիչները միացան հայերին և մի ամբողջ շաբաթ դիմադրեցին չարդարարներին[59]։

Օսմանիեում մի հասարակ թուրք առևտրական անխուսափելի բնաջնջումից ազատեց հարյուրավոր հայերի, օրերով ու շաբաթներով նրանց պահեց իր տանը, իսկ երբ արհավիրքն անցավ, տարավ հանձնեց կայմակամին։ Այնուհետև հաճախ այցելում էր այդ հայերին, հետաքրքրվում նրանց բախտով[60]։

Մուրֆետ գյուղում, երբ խուժանը հարձակվեց հայերի վրա, Մահմուդ Խոջան կազմակերպեց նրանց ինքնապաշտպանությունը և փրկեց կոտորածներից։

Այդպիսի գեր կատարեց նաև Պոյրազ Քյոսեն Պաճե գյուղում։ Նա ոտքի հանեց հայերին չարդարարների դեմ և զինդեց դրանց։ Ուշագրավ է, որ երբ այդ թուրքը հանգամանքների բերումով բացակայում էր գյուղից, հայերի ինքնապաշտպանության գործը ղեկավարում էր նրա կինը։ Զապել Եսայանը գրում է. «Հարյուր հիսուն հայ իրենց կյանքը կպարտին Պոյրազ Քյոսեին»[61]։

Էրզնում երկու թուրքեր՝ Սապրդ Մյուֆթին և Մուսա Էֆենդին հավաքում են 200 հայերի և տեղավորում խանում։ Երբ խուժանը հարձակվում է խանի վրա, նրանք հայերին տեղափոխում են բանտ և շարունակում պաշտպանել նրանց։ Չարդարարները պաշարում են բանտը, կտրում նրա կապը դրսի հետ և ձգտում են հայերին սովամահ անել։ Սակայն 20-ամյա Մեհմեգը, արհամարհելով մահը, ուտելիք է հասցնում նրանց։ Դեպքերի իրազեկը պատմում էր, որ «երբ պաշարյալներուն գրպանի դրամը կսպառի, այն ատեն ինքը կտրամադրե հինգ ոսկի, միակ խնայողությունը, որ ըրած էր

55 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 264—266։

56 Նույն տեղում, էջ 174։

57 Արշակունի Թեոդիկ. նշվ. աշխ., էջ 137։

58 Ներսես եպիսկոպոս Դանիելյան. Նաթիլ մը շուր այրած սրտերու. Կ. Պոլիս, 1912, էջ 50։

59 Տե՛ս Геноцид армян..., с. 177.

60 Տե՛ս С. З. Указ. соч., с. 17—18.

61 Զապել Եսայան. նշվ. աշխ., էջ 216։

երկու-երեք տարիե ի վեր՝ աշխատելով ճարտարապետ Կիրակոս Ուստային քով։ Էրզինցի 200 հայեր մեծ մասը պանդուխտ, իրենց կյանքը կպարտին այդ դեռահաս թուրք երիտասարդին»[62]։

Մերսինում հայերը կոտորածներից փրկվեցին «շնորհիվ իրենց լուսամիտ, արթուն ու բարեխիղճ կառավարչին...»[63]։

Հայանպաստ գործունեություն ծավալեցին նաև որոշ քրդեր, չերքեզներ ու չերքեզուհիներ։ Համիդիեում, Տարսոնում, Հաճընում, Գյոկլունում, Շարդերում և այլ տեղերում նրանք, վտանգելով իրենց կյանքը, փրկեցին շատ հայերի[64]։

Բայց այդպիսի մարդկանց թիվը, ցավոք, քիչ էր։ Համարյա ամենուրեք մահմեդական մոլեռանդ բնակչության մեծամասնությունը, կույր գործիք լինելով իրենց մոլլաների ու պաշտոնյաների ձեռքերում, ակտիվորեն իրագործում էին նրանց հայաջինջ քաղաքականությունը։

Կոտորածների օրերին հայանպաստ որոշ գործունեություն ծավալեցին նաև մի շարք օտարերկրացիներ։ Այսպես. ռուսական հյուպատոսության թարգմանիչ Յանգո Արտյոմիի ծեր մայրը Ադանայում փրկեց 300 հայ, երեք օր պահելով ու խնամելով նրանց[65]։ Ամերիկյան վարժարանի տնօրեն տիկին Քարմելայթ Քրիստիկը Տարսոնում վերահաս կործանումից ազատեց հազարավոր հայերի[66]։ Իսկ ամերիկուհի միս Ռոզե Լեմբրթը Հաճընում իր խնամքի տակ վերցրեց բազմաթիվ հայ որբերի և փրկեց նրանց կործանումից։ Հետագայում նա, գնալով Ամերիկա, հատուկ գիրք գրեց Հաճընի հայերի ինքնապաշտպանության մասին[67]։ Ֆրանսիացի մի ընտանիք Համիդիեում իր մոտ պատսպարեց ջարդերից փախած շուրջ 1000 հայի և սնունդ ու հագուստ տվեց նրանց[68]։ Իտալացի ֆրանցիսկյան մի վարդապետ և ֆրանսիական փոխհյուպատոս Էդգար Ժեոֆրուան Սվեդիայից նավով տեղափոխեցին շուրջ 2000 հայ, որոնք դատապարտված էին ոչնչացման[69]։ Ֆրանսիացի հոգևոր քարոզիչներից շատերը «մահահալած հայուն առջև իրենց դուռն ու գիրկը բացին, իրենց բերնին հացը տվին անոթիներուն, իրենց անկողինը՝ վիրավորներուն, հիվանդ մանկիկներուն ու ծոցվոր կնիկներուն»[70]։ Երբ թուրքական իշխանությունները առաջարկեցին հանձնել հայերին, նրանք պատասխանեցին. «նախ մեզ սպանեցեք, ապա կհանձնենք այս թշվառները»[71]։ Հույն կապիտալիստ Թրիփանը Ադանայի իր գործարանում պատսպարեց հազարավոր հայերի[72]։ Ֆրանսիացի գործարանատիրոջ կին մադամ Սաբաթիեն Համիդիեում ջարդերից փրկեց 750 հայ և մեկ ամիս պահեց ու կերակրեց նրանց[73]։

Այլ էր, սակայն, մեծ տերությունների վարքագիծը։ Զգտելով ամրապնդել իրենց դիրքերը Թուրքիայում և այդ նպատակով բարեկամական կապեր հաստատել թուրքական իշխանությունների հետ, նրանք չէին բռնում դահիճների ձեռքը, ցուցաբերում էին անտարբերություն և երբեմն էլ անուղղակի օգնում էին նրանց։ Օրինակ, Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Գերմանիան, Ռուսաստանը և Իտալիան իրենց նավերը կանգնեցրին միայն Աղեքսանդրետում ու Մերսինում։ Հայերը բազմիցս դիմեցին նրանց օգնու-

62 Նույն տեղում, էջ 264—265։

63 Սուրեն Պարթևյան. Կիլիկյան արհավիրքներ. Կ. Պոլիս, 1909. էջ 33։

64 Տե՛ս С. З. Указ. соч., с. 19—20.

65 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 37։

66 Նույն տեղում, էջ 165—166։

67 Նույն տեղում, էջ 243։

68 Տե՛ս Զապել Եոսյան. նշվ. աշխ., էջ 271։

69 Տե՛ս Սուրեն Պարթևյան. նշվ. աշխ., էջ 43։

70 Նույն տեղում, էջ 48։

71 Նույն տեղում։

72 Նույն տեղում, էջ 144։ Տե՛ս նաև Արշակունի Թեոդիկ. նշվ. աշխ., էջ 57։

73 Արշակունի Թեոդիկ. նշվ. աշխ., էջ 149։

թյանը, բայց ապարդյուն։ Անգլիական հյուպատոսը կոտորածների օրերին երկաթուղով անցնում էր Ադանայից Մերսին և սառնորեն դիտում տեսարանը[74]։ Գերմանացի դիվանագիտական աշխատողները Ադանայում իրենց հաճույքի համար պատուհաններից հացի փշրանքներ էին նետում քաղցած հայերի առաջ և նկարահանում տեսարանը[75]։ Սուրեն Պարթևյանը նշում է, որ երբ ինքը, պատրիարքարանի պատվիրակության անունից, Ադանա—Մերսին գերմանական երկաթուղու տնօրենին խնդրում է հաց փոխադրել Ադանայի սովյալների համար, ստանում է մերժողական պատասխան[76]։

Բնորոշ է, որ տերությունները կոտորածներից չփրկեցին նույնիսկ այն հայերին, որոնք նրանց պաշտպանության տակ անցնելու համար տարբեր ժամանակներում թողել էին լուսավորչականությունը և ընդունել կաթոլիկություն ու բողոքականություն։ Իրազեկն արձանագրում էր, որ ընդհանրապես, «Եվրոպան անտարբեր ու ձանձրացած ականջով մը լսեց հայկական կոտորածներու այս նոր գույժը»[77]։

Անցնենք այժմ Կիլիկիայում 1909 թ. զոհված հայերի թվաքանակի հարցին։ Աղբյուրներում և գրականության մեջ տարբեր տեղեկություններ կան այդ մասին։ Այսպես. օսմանյան կառավարության կողմից նշանակված քննիչ հանձնաժողովը 1909 թ. ամռանը հայտարարեց, որ ամբողջ Ադանայի նահանգում սպանվել է 5683 մարդ, որից 1487-ը մահմեդական, իսկ 4196-ը՝ քրիստոնյա[78]։ Ադանայի կուսակալը 1909 թ. մայիսի 1-ին նշեց, որ իր նահանգում սպանված են 1924 և վիրավորված 533 մահմեդական, իսկ հայերից զոհված են 1455 և վիրավորված՝ 383 մարդ[79]։

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով 1909 թ. Կիլիկիայում սպանվել է 20000—30000 հայ[80]։ Այդ քանակը հավաստեց նաև Ադանայի ֆրանսիական հյուպատոսը[81]։ Ֆրանսիացի պատմաբան Ժորժ Բրեզոլը 1911 թ. Փարիզում հրատարակած իր «Այստեղից թուրքեր են անցել... ճըշմարտությունը 1909 թվականի Ադանայի կոտորածների մասին» արժեքավոր աշխատությունում, հանգամանորեն վերլուծելով փաստերը, եկավ այն եզրակացության, որ «հայ ազգը կորցրեց երեսուն հազար մարդ»[82]։

Կ. Պոլսի ռուսական դեսպան Ի. Ա. Զինովևը 1909 թ. ապրիլի 18-ին գրում էր, որ Ադանայի վիլայեթում սպանվել են 15000 քրիստոնյա, գերազանցապես հայ[83]։ Հավանական է, որ նա ձեռքի տակ դեռ չուներ զոհերի լրիվ թվաքանակը։

1913 թ. հուլիսին բոլշևիկյան «Պրավդան» մատնանշեց, որ Ադանայում 1909 թ. կոտորվել է շուրջ 30 000 հայ[84]։

Կիլիկիայի 1909 թ. զոհերի մասին տարբեր տվյալներ են հիշատակվում նաև մեր օրերում։ Պատմության թուրք կեղծարար Էսատ Ուրասը 1950 թ. Անկարայում լույս ընծայած իր աշխատություններից մեկում գրում է, թե իբր հայերից սպանվել է միայն 1000 մարդ[85]։

---

74 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 49—50։

75 Արշակունի Թեոդիկ. նշվ. աշխ., էջ 27։

76 Տե՛ս Սուրեն Պարթևյան. նշվ. աշխ., էջ 179—180։

77 Նույն տեղում, էջ է։

78 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 694։

79 Տե՛ս նույն տեղում, էջ 300։

80 Տե՛ս С. З. Указ. соч., с. 29.

81 Նույն տեղում։

82 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, V, Թուրքիա. Երևան, 1970, էջ 312։

83 Տե՛ս Геноцид армян..., с. 168.

84 Правда (1912—октябрь 1917 г.), Социал-демократ (1908—1917 гг): О Закавказье (сборник), составитель Г. А. Исаакян. Ереван, 1968, с. III

85 Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, V, Թուրքիա, էջ 307։

Սովետահայ պատմաբանները նշում են, որ 1909 թ. Կիլիկիայում զոհվել է մոտ 30000 հայ[86]։

Անշուշտ, թուրքական պաշտոնական շրջանների և նրանց կրկնող պատմության թուրք կեղծարարների տվյալները հեռու են իրականությունից։ Ընդրանք խեղաթյուրում են պատմական փաստերը, ծուռ հայելու մեջ են ներկայացնում իրական պատկերները, որպեսզի նսեմացնեն իրենց վայրագությունները։

Ճշմարտության մոտ պիտի համարել Հայոց ազգային վարչության քննիչ մասնախմբի տեղեկությունները, որոնք բարեխղճորեն և ուշադրությամբ հավաքվեցին ջարդերից համարյա անմիջապես հետո։ Համաձայն այդ տեղեկությունների, 1909 թ. Կիլիկիայում թուրքական բարբարոսների կողմից սպանվել են 22512 քրիստոնյա, որից 18839 հայ, 1250 հույն, 850 ասորի և 422 քաղդեացի[87]։ Դրանց մեջ չեն հաշվված այն հայ պանդուխտ-մշակները կամ արտագնաց-գյուղացիները, որոնք Անատոլիայի, հատկապես Արևմտյան Հայաստանի զանազան շրջաններից վաստակի համար մեկնել էին Կիլիկիա, աշխատելու նրա արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ (Ընդրանք չէին գրանցված որևէ տեղ և, հետևաբար, չէին կարող հաշվի առնվել Հայոց ազգային վարչության քննիչ մասնախմբի կողմից)։ Մի շարք հեղինակներ գտնում են, որ դրանց թիվը հասնում էր 10000—15000-ի[88]։

1910 թ. «Ազատամարտի» թղթակից Հակոբ Շահպազյանը բերում էր ավելի հավաստի տեղեկություններ, նշելով, որ 1909 թ. Կիլիկիայի 254 թուրքաբնակ գյուղերում դահիճների կողմից կոտորվեցին 10293 հայ արտագնաց-գյուղացիներ։ Նրանք «բոլոր մշակներ և նվազ մասով արհեստավորներ են. հաճընցի, խարբերդցի, կապանցի, ֆրնուզցի, կարնեցի, էվերենցի, անտիոքցի, կյավուրտաղցի, կեմերեկցի, սվազցի, անտիամանցի, պեսնիցի, մալաթիացի, սղերդցի, ուրֆացի, մուշեցի, ալպիստանցի, տիվրիկցի և այլն»[89]։

Հայ մշակները թուրքական գյուղերից զատ հարյուրներով ու հազարներով, տեղացիների հետ միասին, սպանվեցին նաև հայկական բնակավայրերում[90]։

Մի շարք հեղինակներ վկայում են, որ կոտորածների ժամանակ տեղացիներն ավելի քիչ սպանվեցին, քան եկվոր-մշակները։ Այսպես, օրինակ, Ներսես եպիսկոպոս Դանիելյանը գրում է, որ Կիլիկիայի ահավոր եղեռնի կենտրոնը թեև Ադանան էր, բայց զոհերի մեծ մասը դրսեցի, մանավանդ հաճընցի հայերն էին[91]։ Նույն բանն է հաստատում նաև Ս. Պարթևյանը[92]։

Եթե Հայոց ազգային վարչության քննիչ մասնախմբի վերոհիշյալ 18839 սպանված տեղացի հայերի թվի վրա ավելացնենք եկվոր հայ մշակ զոհերի թիվը, որը, ինչպես արդեն ցույց տվեցին փաստերը, կազմում էր առնվազն 10000—15000, ապա անվերապահորեն պիտի համաձայնվել այն եզրակացության հետ, որ Կիլիկիայում 1909 թ. թուրքական ոճրագործների կողմից կոտորվել է շուրջ 30000 հայ։

---

86 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. VI, Երևան, 1981, էջ 499. Հայ ժողովրդի պատմություն. Երևան, 1985, էջ 317։ Ս. Պ. Ադայան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից. Երևան, 1976, էջ 273։ Е. К. Саркисян. Политика османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX в. Ереван, 1972, с. 266.

87 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 281։

88 Տե՛ս С. З. Указ. соч., с. 31; Геноцид армян..., с. 193, О. Г. Инджикян. Буржуазия Османской империи. Ереван, 1977, с. 70.

89 «Ազատամարտ», 2/15 ապրիլի 1910։

90 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 176, 189 և այլն։

91 Տե՛ս Ներսես եպիսկոպոս Դանիելյան. նշվ. աշխ., էջ 15։

92 Տե՛ս Սուրեն Պարթևյան. նշվ. աշխ., էջ 128։

Դահիճները մի շարք հայաբնակ գյուղերում թողեցին բնակչության չընչին մասը (Միսիսում, օրինակ, 1000 մարդուց կենդանի մնացին 86-ը, Ինջիրլիքում՝ 700-ից 60-ը, Խարնիում՝ 190-ից 9-ը, Քրիսառսում՝ 45-ից 3-ը և այլն), իսկ այլ տեղերում սրի քաշեցին բոլորին[93]։

Բայց այդ ամենը դեռ մի կողմ թողած։ Կոտորածներից հետո Կիլիկիայի փրկված հայությունը մնաց անօթևան, սովի ու հիվանդությունների ճիրաններում ու շարունակեց բնաջնջվել նաև, այսպես կոչված, խաղաղ պայմաններում։ Ահա այդ մասին ուղևորների և ուսումնասիրողների կողմից արձանագրված մի քանի վկայություններ։

Զապել Եսայանը գրում է, որ Ադանայում «բան մը չէ խնայված, բոլոր եկեղեցիները, բոլոր դպրոցները ու բոլոր բնակարանները անձև ու խանձված քարի կույտերու վերածված են՝ որոնց մեջեն անդին ասդին շենքերու կմախքներ կցցվին»[94]։ Եվ ապա՝ «Հոն տեսա մայրեր, որ իրենց զավակները խեղդած էին, անոնց մանկական ճիչերեն չմատնելու համար իրենց թաքստոցին մեջ, հոն տեսա կիներ, որ անդամալուծված, լեղունին թուշերուն վրա կախված, անկարող էին իրենց սրտին ցավը գոչելու. հոն տեսա խելագարվածներ, որ փոխանակ մոռնալու, սոսկալի վայրկյանը կապրեին շարունակաբար»[95]։ Նրանք, օրինակ, վերհիշում էին իրենց ապրածն ու տեսածը, պատմելով. «Շարքով դրին հոն, քովե քով, ու զարկին, զարկին, զարկին, ու ամենքն ալ սանկ երերացին մեկ մը ու ինկան...»[96]։

Հակոբ Թերզյանը բերում է Կիլիկիայի հայոց հոգևոր առաջնորդների ու բնակիչների հեռագրերը Կ. Պոլսի հայոց պատրիարքին, ուր նրանք նկարագրում էին իրենց դրությունը և հայտնում խնդրանքներ։ Այսպես, 1909 թ. ապրիլի 22-ին Հաճընի հոգևոր առաջնորդ Ներսեսը հեռագրում էր. «15000 կարոտյալներու անունով փրկություն կթախանձենք»[97]։ Իսկենդերունի բնակիչները 1909 թ. ապրիլի 20-ին հայտնում էին. «Հացի կարոտ ենք, մեծ ու պզտիկ, կին ու տղա, 12000 թշվառներ ենք և ձեր գթությունը կկարոտինք...»[98]։

Սոսկալի էր հատկապես երեխաների դրությունը։ Նրանք չէին դիմանում սովին, ցրտին ու հիվանդություններին և ուղղակի բնաջնջվում էին։ 1909 թ. ապրիլի 12-ին Հալեպի հոգևոր առաջնորդ Շահե վարդապետը հեռագրում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքին, որ իր վիճակում «12000-է ավելի որբեր և այրիներ, բաց օդի մեջ, ծվեն ծվեն եղած սովալլուկ, հիվանդ ու անխնամ մնացած են, թշվառ և գութի արժանի վիճակի մը մեջ են։ Այս կուտակված աղետյալներու մեծ մասը կառավարութենեն օգնություն չստանար և ինչ որ կհայթայթվի անոնց համար շատ ոչինչ է»[99]։ Ապա ավելացնում էր, որ հանգանակության կարգով հավաքած գումարով չեն կարող նույնիսկ աղ գնել։

Ադանայում օրական 100-ից ավելի մանուկներ էին մեռնում համաճարակից։ «Հինգ տարեկանեն փոքր մանուկներ շատ քիչ մնացին»[100]։ Անգամ երիտթուրքական «Թանին» թերթը 1909 թ. հունիսի 30-ին հայտնում էր, որ «բուն իսկ Ադանայի մեջ 532 որբեր բնակարանի և սնունդի պակասութենեն մեռած են»[101]։

Սուրեն Պարթևյանը փորձում է ավելի կոնկրետ տվյալներ բերել Կիլիկիայի տարաբախտների մասին։ Նա նշում է, որ Ադանայի վիլայեթի մի շարք շրջաններում 40000 հայեր գտնվում են անօթևան ու սովահար վիճա-

93 Տե՛ս Геноцид армян..., с. 190—191.

94 Զապել Եսայան. նշվ. աշխ., էջ 16։

95 Նույն տեղում, էջ 19։

96 Նույն տեղում։

97 Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 320։

98 Նույն տեղում, էջ 317—318։

99 Նույն տեղում, էջ 310—311։

100 Նույն տեղում, էջ 149։

101 Նույն տեղում, էջ 336։

կում. դրանցից 15000-ը Ադանայում, 3000-ը՝ Տարսոնում, 1500-ը՝ Մերսինում, 1000-ը՝ Քեսապում ու շրջակայքում, գրեթե նույնքան էլ Ալեքսանդրեթում ու Տյորթյոլում և այլն[102]։ Ապա գրում է, որ ամենահարուստներն անգամ «հիմա պատառ մը հաց կմուրանն»[103]։ Այդ բոլոր տարաբախտները կարող են մեռնել, եթե օգնություն չինի[104]։ Կառավարությունը 20000 ոսկի հատկացրեց նրանց, բայց դա մեծ վերքի բուժման համար շատ քիչ էր և տեղ չէր հասնում։

Ջարդերից հետո, երբ հայ քաղաքական շրջանների կողմից առանձնացված հանձնաժողովը ժամանեց Կիլիկիա, բոլոր կարիքավորները «զանգվածային խուժումով մը» դիմեցին նրան, «բայց ո՞ր մեկուն հասնիլ, ո՞ր մեկուն բավել, ո՞ր մեկուն խոսք հասկցնել... ամենքն ալ օգնության ու պաշտպանության կարոտ»[105]։ Հանձնաժողովի անդամները մոտենում են վրաններին, տեսնում «հողի վրա պառկած հիվանդ մանկիկներ, որոնց շուրջը կըհսկեն իրենց ցավագին մայրերը... Ահռելի է վիճակը այդ վրաններուն տակ պառկող հիվանդներուն... Քչերը պիտի ազատին»[106]։

Ա. Ադոսսիդեսը նշում է, որ զոհերի թվում պետք է հիշատակել նաև բոլոր նրանց, ովքեր փրկվել են դժոխքից տկար, խոցված ու խոցոտված, դարձած աշխատանքի անընդունակ, խելագարված, ինչպես և այն կանանց ու երեխաներին, որոնք բռնությամբ մահմեդականացված են։ Ապա նա շարունակում է, որ Կիլիկիայում աղջիկների հունձն առատ էր, շատերը վաճառվեցին որպես ստրուկներ և արտահանվեցին Անատոլիայի տարբեր շրջանները[107]։

Բուզմաթիվ հայեր հեռացան Թուրքիայից, մեկնեցին արտասահման՝ մասնավորապես Կիպրոս, Լիբանան, Եգիպտոս, Ամերիկա և այլ վայրեր։

Սուրեն Պարթևյանը նշում է, որ Կիլիկիայում բոլոր տառապածների, կամ ինչպես ինքն էր ասում՝ կարոտյալների թիվը հասնում էր մոտ 80 հազարի[108]։ Եթե դրա վրա ավելացնենք 30 հազար սպանվածների թիվը, կըտեսնենք, որ թուրքական իշխանությունները կես ամսվա ընթացքում ջարդի ու թալանության մատնեցին կիլիկիահայության շուրջ կեսը։

Մարդկային զոհերի հետ մեկտեղ Կիլիկիայի հայերը կրեցին նաև նյութական մեծ վնասներ։ Ջարդարարներն ավերեցին Ադանայում 1190 տուն, 5 դպրոց, 6 եկեղեցի և շուկայի հայապատկան բոլոր կրպակները, Տարսոնում հրկիզեցին 800 տուն, Հասան Բեյլիկում՝ 416, Բախշեում՝ 115, Լափաժլիում՝ 120, Ինջիրլիքում՝ 145, Օսմանիեում՝ 200 տուն։ Այդ ու այլ վայրերում նրանք միաժամանակ հիմնահատակ արեցին բազմաթիվ կրպակներ, արհեստանոցներ ու ձեռնարկություններ[109]։

Ամբողջ Ադանայի վիլայեթում թուրքական ոճրագործները, պաշտոնական նվազեցրած տվյալներով, կործանեցին 2323 տուն, 1429 ամառանոց, 1002 հյուղ, 500 խանութ, 24 եկեղեցի, 23 ջրաղաց, 16 դպրոց, 14 խան, 3 հյուրանոց, 2 գործարան և այլն։ Օսմանյան բանկի ոչ լրիվ տեղեկություններով այդ վիլայեթի հայերի նյութական վնասը կազմեց 5 միլ. ոսկի[110]։

Ապրիլյան կոտորածների օրերին էապես տուժեցին նաև Հալեպի վիլայեթի հայերը։ Նրանց սպանվածների թիվը կազմեց 1151 մարդ, իսկ նյութական վնասը՝ 11981 ղուրուշ[111]։

---

102 Տե՛ս Սուրեն Պարթևյան. նշվ. աշխ., էջ 47։
103 Նույն տեղում, էջ 37։
104 Նույն տեղում, էջ 40։
105 Նույն տեղում, էջ 161։
106 Նույն տեղում, էջ 162—163։
107 Տե՛ս Геноцид армян..., с. 194—195.
108 Տե՛ս Սուրեն Պարթևյան. նշվ. աշխ., էջ 37, 40։
109 Նույն տեղում։
110 Տե՛ս Հակոբ Հ. Թերզյան. նշվ. աշխ., էջ 254։
111 Նույն տեղում, էջ 267։

Հայկական ջարդերին մասնակցող թուրքերը տիրացան իրենց զոհերի տներին ու կալվածքներին, հոտերին, խանութներին ու կրպակներին, արհեստանոցներին ու ձեռնարկություններին, դրամին ու զարդերին, մի խոսքով՝ բոլոր հարստություններին։ Այն, ինչ հայերը ստեղծել էին իրենց արդար քրտինքով տասնամյակների ընթացքում, թուրքերը ձեռք բերեցին միայն մի քանի օրում։ Բազմաթիվ գողեր ու ավազակներ և հասարակության այլ թափթփուկներ դարձան նշանավոր պաշտոնյաներ, աղաներ ու բեյեր, էֆենդիներ ու մոլլաներ։

Երիտթուրքերը փորձեցին խուսափել Կիլիկիայի եղեռնագործության համար պատասխանատվությունից։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կիլիկյան կոտորածները ժամանակագրական տեսակետից համընկան Աբդուլ Համիդի հեղաշրջմանը, նրանք հայտարարեցին, թե այդ կոտորածները սուլթանն է կազմակերպել։ Ապա փորձեցին մեղքը գցել հայ քաղաքական կուսակցությունների վրա, հայտարարելով, թե իբր նրանք նախապատրաստվել են ապստամբության և զսպվել են տեղական ուժերի կողմից։ Սակայն դա պարզապես ստախոսություն էր, որովհետև բոլորը գիտեին, որ դաշնակցությունը այդ տարիներին համագործակցում էր երիտթուրքերի հետ, իսկ հնչակյանները, ինչպես նշում էր Մուշեղ եպիսկոպոսը, Կիլիկիայում մատնված էին անգործության։ Իթթիհատի կողմից Կիլիկիայի կոտորածներն ուսումնասիրելու նպատակով Ադանա գործուղված անձինք հաստատեցին, որ երիտթուրքերը մեղսակից են այդ կոտորածներին։ Հանձնաժողովի նախագահ Հակոբ Պապիկյանը արձանագրում էր. «Իթթիհատ վե թերաքը կուսակցության անդամները Ատանայի վայրագ եղերգության կազմակերպման և գործադրության մասնակցած են։ Այս իրողությունը հաստատված է նահանգին զանազան տարրերուն կողմե, հյուպատոսներե, ամերիկացի միսիոներներե և լատին քահանաներե»[112]։

Ինչ խոսք, որ Կիլիկիայի հայկական ջարդերի կազմակերպիչները եղել են և՛ սուլթանը, և՛ երիտթուրքերը, քանի որ այդ ոճրագործությունը նախապատրաստվում էր ինչպես 1908 թ. հեղաշրջումից առաջ, այնպես էլ հետո։ Ջարդերն իրագործեցին տեղական իշխանությունները, հոգևորականները, զինվորականներն ու հատկապես խուժանը։ Աբդուլ Համիդի ու Իթթիհատի կառավարությունները չէին կարող կենսագործել հայկական կոտորածներն առանց այդ ուժերի, իսկ այս ուժերն էլ չէին կարող գործի անցնել, առանց իշխողների հրահրանքի և խրախուսանքի։

Այնուամենայնիվ, երիտթուրքերը, միջազգային առաջադեմ հասարակայնության ճնշման տակ, պատասխանատվության կանչեցին Կիլիկիայի կոտորածների հանցագործներին։ Հիլմի փաշայի կառավարությունը հրահանգեց ձերբակալել և Ադանա ուղարկել դատելու նախկին կուսակալ Ջևադ բեյին, զինվորական հրամանատար Մուսթաֆա Բեմզի փաշային, Բաղդադի Աբդուլ Կագերին, Ջեբել-Բերեքեթի մյութեսարիֆ Ասաֆ բեյին և ուրիշների։ Սակայն Ադանայի նոր կուսակալ Մուսթաֆա Ջիհնի փաշան կտրականապես մերժեց գործադրել այդ կարգադրությունը, «նախընտրելով պաշտոնանկ ըլլալ՝ քան խոշոր տիտղոսավոր ոճրագործներու դեմ ցցվիլ»[113]։ Այդպիսի հայտարարությամբ հանդես եկավ նաև իթթիհատական զինվորական ատյանը։ Հիլմի փաշայի կառավարությունը, որ առանձին ցանկություն չուներ պնդելու իր որոշումը, տեղի տվեց և Ադանայի այդ ու այլ գլխավոր հանցագործները «թեթև գլխացավերե զատ՝ ուրիշ պատժի չենթարկվեցան»[114]։ Բայց կիլիկյան դեպքերը չէին կարող մատնվել անուշադրության։ Եվ երիտթուրքական

112 Ատանայի եղեռնը. Տեղեկագիր Հակոբ Պապիկյանի՝ օսմանյան երեսփոխան էդիրնեի. Կ. Պոլիս, 1919, էջ 42։

113 Մուրեն Պարթևյան. նշվ. աշխ., էջ 115։

114 Նույն տեղում։

իշխանությունները, մի կողմ թողնելով իսկական հանցագործներին[115], հրաչակեցին 15 մարդու անուններ իբրև մեղավորներ, որոնցից 9-ը մահմեդական, 6-ը հայ։ Սակայն դրանք, հատկապես հայերը, բոլորովին անմեղ մարդիկ էին։ Նրանց ճանաչողները նույնիսկ բողոքեցին։ Բայց թուրքական դատարանը զանց առավ այդ ամենը և արձակեց մահապատժի վճիռ, որը կենսագործվեց։

Ապա բթթիհատական իշխանությունները ձերբակալեցին ևս 362 մարդու (213 հայ և 149 թուրք) և հանձնեցին զինվորական դատարանին։ Հատկանշական է, որ նրանք կալանքի վերցրեցին հիմնականում ջարդերի օրերին թուրքական յաթաղանին ակտիվորեն դիմադրող և ինքնապաշտպանություն կազմակերպող հայերին (դրանց մեջ էին Միհրան Մելքոնյանը, Սահակ քահանա Տեր-Գևորգյանը, Պետրոս Փելթեքյանը և շատ ուրիշներ)։ Զինվորական դատարանը, որ բաղկացած էր կիլիկյան կոտորածների կազմակերպիչներից, ղեկավարներից ու մասնակիցներից, կալանավորների մի մասին ազատեց, իսկ մյուսին դատապարտեց տարբեր ժամկետներով բանտարկության։ Դեպքերին քաջատեղյակ տիտուլյար խորհրդական Շելկովնիկովը 1909 թ. հունիսին, յինելով Ադանայում, գրում էր այդ դատավարության մասին. «Իսկական մեղավորներն ու մարդասպանները, այսինքն՝ իշխանություններն ու մակեդոնական (երիտթուրքական) դորքերը չեն էլ մտածում թաքնվել, դրա կարիքը նրանք չեն զգում, քանի որ հենց իրենք են ռազմական դատարանի և հետաքննչական հանձնաժողովների անդամները, հենց իրենք էլ այժմ պաշտպանում են կարգն այն երկրում, որտեղ իրենց ձեռքերով կոտորեցին մինչև 25—30 հազար քրիստոնյա։ Այն, ինչ կատարվում է ռազմական դատարանում, հատկապես Ադանայում, արդարադատության պատրվակի տակ, հանդիսանում է չարագույն ամենատ արդարության նկատմամբ... ստացվում է այնպիսի տպավորություն, կարծես թե հայերն են ջարդել 30 հազար անզեն մահմեդական և հիմա դրա համար պատժում են նրանց»[116]։

1910 թ. ապրիլին նոր սուլթան Մեհմեդ V Բեշադը իր դահակալության տարեդարձի առթիվ ներում շնորհեց բանտարկվածներին և այդպիսով ավարտվեց Ադանայի գործը[117]։

Կիլիկիայի հայերի կոտորածները համիդյան և երիտթուրքական կառավարությունների կողմից որոշակիորեն մշակված հայաջինջ ծրագրի կոնկրետ իրագործումն էին։ Դրանք հայկական Մեծ եղեռնի նախերգանքն էին և XX դարի սկզբի մարդկության պատմության սև էջերից մեկը։

РЕЗНЯ АРМЯН В КИЛИКИИ В 1909 г.

Доктор ист. наук А. С. АМБАРЯН

Резюме

Резня армян в Киликии в 1909 г. была подготовлена до младотурецкого переворота 1908 г. Ее организаторами были как султанские, так и младотурецкие власти. С 1 по 17 апреля мусульманской чернью и войсковыми частями было истреблено около 30 тыс. армян, ограблены десятки тысяч семей. Во многих местах—в Адане, Аджине, Чок-Марзване или Теорт-Еле и других—армяне оказывали героическое сопротивление, но силы были слишком неравными, погромщики жестоко расправлялись с армянами.

---

115 Այդ հանցագործների անունները մեկ առ մեկ բերվում են Մուշեղ եպիսկոպոսի նշված աշխատության 61—63 էջերում։

116 Геноцид армян..., с. 172.

117 Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, ապրիլի 27, № 4108։